[illegible]

Երբեք չմոռանալ երախտավոր երաժիշտներին, ովքեր առանձնակի ավանդ են ներդրել վրացական երաժշտական կուլտուրայի մեջ, ժողովրդականացնել նրանց հիանալի գործունեության արդյունքները՝ ահա այս շնորհակալ գործով անդուլ կերպով զբաղված է Թբիլիսիի պետական կոնսերվատորիայի պատմության գլխավոր թանգարանապահ Մարինա Չիխլաձեն: Նա նախատեսել է համերգաշարք, ուր ելույթ են ունենում Սուլխան Ցինցաձեի անվան պետական լարային կվարտետի մասնակիցների երիտասարդ սաները: Այդ փառապանծ լարային կվարտետի գրեթե կեսդարյա փառքը այժմ բազմապատկում են Կոնստանտին Վարդելին (առաջին ջութակ), Թամազ Բատիաշվիլին (երկրորդ ջութակ), Նոդար Ժվանիան (ալտ), Օթար Չուբինիշվիլին (թավջութակ): Համաշխարհային ճանաչում ստացած այս երաժիշտները Վրաստանի ժողովրդական արտիստներ են, Զաքարիա Փալիաշվիլու եւ Շոթա Ռուսթավելու անվան մրցանակների դափնեկիրներ, նաեւ՝ կոնսերվատորիայի պրոֆեսորներ, ինչն ավելի է բարձրացնում նրանց ստեղծագործության գնահատողների հետաքրքրությունը:
Այս վարպետների դասական համերգները, ինչպես նաեւ ճանաչված թավջութակահարուհի Թամար Գաբարաշվիլու ելույթը տեղի ունեցան Իլիա Ճավճավաձեի անվան ազգային խորհրդարանական գրադարանում:
Վերջերս կայացավ առաջին համերգը այդ շարքից: Երաժշտագետ Ռուսուդան Ծուրծումիան հանդիսականին ներկայացրեց Նոդար Ժվանիային եւ պատմեց նրա մեծածավալ մանկավարժական գործունեության մասին:
Նրա սաներից առաջին կուրսեցի Սամվել Փերիխանյանը մեծագույն արտահայտչականությամբ կատարեց Ռոբերտ Շումանի «Անտանտեն» եւ «Ալլեգրոն»՝ «Չորս հեքիաթ» շարքից: Երաժշտի ելույթից հուզված, պրոֆեսոր Թամազ Բատիաշվիլին առանձնակի ընդգծեց իր հիացմունքը: Փայլուն հանդես եկավ նաեւ առաջին կուրսեցի Մարիամ Չիկվաիձեն: Երիտասարդ երաժիշտների հաջողությունը արժանիորեն բաժին է ընկնում նաեւ կոնցերտմեյստեր Մարիա Ձուրջուլիային: Կոնսերվատորիայում Նոդար Ժվանիան ղեկավարում է նաեւ կամերային համույթի դասարանը եւ համերգում ներկայացրեց լարային կվարտետ, որի կազմում հանդես եկան Թեյմուրազ Չանիանին (առաջին ջութակ¤, Նիկոլայ Բարաթելին (երկրորդ ջութակ¤, Մամուկա Բաբուաձեն (ալտ¤, Սանդրո Սիդամոնիձեն (թավջութակ¤: Նրանք լավագույնս կատարեցին Հայդնի եւ Շոստակովիչի ստեղծագործություններից:
Երաժշտասերները խորին երախտագիտություն հայտնեցին միջոցառման կազմակերպիչներին եւ, առաջին հերթին, պրոֆեսոր Նոդար Ժվանիային, նրան մաղթելով հետագա հաջողություններ:

[illegible]